ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի պատմաբան-արևելագետ, միջազգայնագետ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը:

Նիկոլայ Հովհաննիսյանը ծնվել է 1930 թ. Դյումրիում: 1953 թ. ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա: 1958 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1968-ին դոկտորական ատենախոսություն: 1960 թ. Ն. Հովհաննիսյանը աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, իր գործունեությունը ընդմիշտ կապելով հայ արևելագիտությանը: Նա շուրջ 14 տարի ղեկավարեց Արաբական երկրների բաժինը, իսկ 1984-1995 թթ. վարում էր ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը: 1995թ. առ այսօր Ն. Հովհաննիսյանը հանդիսանում է Արևելագիտության ինստիտուտի տնօրենը:

Իր հոբելյանին Նիկոլայ Հովհաննիսյանը ներկայանում է գիտական վիթխարի ներդրումով: Նրա շուրջ երեք տասնյակ մենագրություններն ու ավելի քան 250 հոդվածները հոբելյարին իրավամբ միջազգային լայն ճանաչում են բերել: Վերլուծական խոր ունակությունները և օտար լեզուների ազատ տիրապետումը Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական գործունեության լավագույն գրավականն են: Նրա աշխատություններն աչքի են ընկնում թեմատիկայի բազմազանությամբ, եզրակացությունների համոզչությամբ և պարզությամբ: Նրա խառնվածքին, բնականաբար նաև ուսումնասիրություններին հատուկ չէ տրորված արահետներին հետևելը: Ն. Հովհաննիսյանը իր էությամբ նորարար է, որը լավագույնս գրսևորվել է նրա հետազոտություններում:

Ն. Հովհաննիսյանը Արաբական Արևելքում ազգային-ազատագրական պայքարին նվիրված մի շարք հիմնարար հետազոտությունների հեղինակ է: Նրա բեղուն գրչի արգասիքն են «Ազգային-ազատագրական

պայքարը Լիբանանում (1939-1958)» (Երևան, 1967), «Անկախ Սիրիական Հանրապետության կազմավորումը (Մոսկվա, 1968, ռուսերեն) և այլ մեծարժեք աշխատություններ:

Վերջին տարիներին Ն. Հովհաննիսյանի գիտական ուսումնասիրությունների շրջանակում ընդգրկվել են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, տարածաշրջանային կոնֆլիկտների և անվտանգության արգիական և քաղաքականացված խնդիրները: Նրա մեծաքանակ հետազոտություններում, որոնց շարքում հատկապես անհրաժեշտ է հիշատակել «Ղարաբաղյան կոնֆլիկտը. փուլեր, մոտեցումներ, լուծման տարբերակներ» (Երևան, 1997, ռուսերեն), «Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը և դրա լուծման տարբերակները» (Մերիլենդ, ԱՄՆ, 1998), «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը» (Երևան, 1998, անգլերեն), «Ղարաբաղի խնդիրը» (Երևան, 1999, անգլերեն), ուսումնասիրվող հիմնահարցերի մշակման հետ միաժամանակ, առաջարկվում են վերոհիշյալ հրատապ խնդիրների լուծման իրատեսական լուծումներ: Վերոհիշյալ ուսումնասիրություններում ներդաշնակորեն միավորված են Ն. Հովհաննիսյանի գիտնականի և քաղաքական գործչի համամասնորեն ներկայացված գծերը:

Գիտահետազոտական գործունեությունը Ն. Հովհաննիսյանը հաջողությամբ զուգակցել է մանկավարժական աշխատանքին և գիտական նոր կադրերի պատրաստման բարդ և անհրաժեշտ գործին: Հայաստանի արաբագետների գերակշիռ մասը նրա աշակերտներն են: Այսօր էլ նրա ղեկավարությամբ մասնագիտանում են ավելի քան մեկ տասնյակ երիտասարդ արաբագետներ:

Թվում էր, թե գիտական այս մեծ վաստակով ձեռքբերված դափնիները թույլ կտային Նիկոլայ Հովհաննիսյանին մի քիչ դադար առնելու, սակայն այդպիսին չէ մեր հոբելյարը: Այսօր էլ նրա գիտական բազմազան ծրագրերը իրենց ընդգրկումով և ծավալով պատիվ կբերեին յուրաքանչյուր անհամեմատ երիտասարդ գիտնականի: Իր իսկ խոսքերով, ժամանակը չի բավարարում ավելին անելու, քան արված է:

Գիտահետազոտական խոշոր ժառանգության հետ մեկտեղ անուրանալի են Ն. Հովհաննիսյանի գիտակազմակերպչական ունակությունները և վաստակը: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում աննկուն եռանդի շնորհիվ նրան հաջողվեց բառացիորեն փրկել 90-ականների սկզբների ցնցումներից անկում ապրող հայ արևելագիտությունը: Պահպանելով Արևելագիտության ինստիտուտի ավանդական դարձած բոլոր հիմնական ուղղությունները, նա հաջողությամբ ձեռնամուխ եղավ նոր բնագավառների հիմքերի հաստատմանը և կադրային թարմացմանը: Այս քաղաքականության արդյունքը ինստիտուտի սասանված հեղինակության վերականգնումն էր և գիտական կյանքի աշխուժացումը: Այսօր ինստիտուտի գիտական արտադրանքը նույնիսկ գերազանցում է 1970-80-ական թվականների մակարդակը:

Ն. Հովհաննիսյանի գիտական մեծ վաստակը ըստ արժանվույն գնահատվել է արտասահմանի մի շարք գիտական և գիտաքաղաքական կազմակերպությունների կողմից: Նա հանդիսանում է Նյու Յորքի ակա-

դեմիայի, Ազգային Անվտանգության պրոբլեմների միջազգային ակադեմիայի (Մոսկվա) և Փարիզի «Արարատ» ակադեմիայի անդամ:

Գիտական և գիտակազմակերպչական աշխատանքի հետ մեկտեղ Ն. Հովհաննիսյանը ակտիվորեն մասնակցել է Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին: Նա երկար տարիներ հանդիսացել է Խորհրդա-արաբական բարեկամության ընկերության փոխնախագահը և ղեկավարել նույն ընկերության Հայկական բաժանմունքը, եղել է Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության Խորհրդային կոմիտեի անդամ, ԽՍՀՄ-Իրաք և ԽՍՀՄ-Լիբանան ընկերությունների փոխնախագահ, ԱՕԿՍ-ի նախագահության անդամ:

Մաղթենք հոբելյարին քաջառողջություն, գիտական նոր արարումներ և բարենպաստ երթ հանուն հայ արևելագիտության զարգացման:

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ